ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ Կ. ՍԻՏԱԼԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Հունվար 24, 1952

1951 թվին լրացավ ամերիկահայ տաղանդավոր բանաստեղծ Կ. Սիտալի գրական գործունեության 40-ամյակը։

Ի պատասխան նախաձեռնող հանձնախումբի մը կոչին, ավելի քան հարյուր ամերիկահայ գրագետներ, արվեստագետներ, հրապարակագիրներ, և հասարակական դեմքեր փափաք հայտնեցին անդամակցիլ Հոբելյանական հանձնախումբին, տոնելու համար Կ. Սիտալի գրական ստեղծագործությանց այս նշանակելի հանգրվանը։

1951 նոյեմբեր 25-ին, Նյու Յորքի մեջ սարքված անդրանիկ ժողովի մը մեջ, խանդավառորեն և միաձայնությամբ, որոշվեցավ մեծ բանաստեղծի հոբելյանը արժանավայել կերպով տոնել ամերիկահայ հայաշատ կեդրոններու մեջ։ Այդտեղ ընտրվեցավ Կեդրոնական Գործադիր Հանձնախումբ մը, ղեկավարելու հոբելյանական աշխատանքները։

1911 թվականին իր ծննդավայր Վանի մեջ Սիտալը գրական ասպարեզ կիջնե իր բանաստեղծություններով, որոնք անմիջապես խանդավառ ընդունելություն կգտնեն հայ մամուլի և ընթերցող հասարակության կողմե։

Սիտալը հայ ժողովրդի և համայն մարդկության ազատության, հառաջադիմության և ավելի երջանիկ ապագայի մը անսասան հավատքը երգած է, բանաստեղծի ջերմ շունչով, խոր անկեղծությամբ ու արվեստով։

Սիտալը հայ ժողովուրդին տված է բազմաթիվ հոգեշունչ և գեղեցիկ բանաստեղծություններ։ Նաև «Լուսաբացի Երգեր», «Կարավանի Եռեւեն», «Սասնա Ծռեր», «Կաշտի Քաջեր», «Հազարան Բլբուլ» և ուրիշ դյուցազնավեպեր, առանձին հատորներով։ 1946-ին Հայաստան այցելության առթիվ հրատարակեց «Տեսա մեր երկրի արևածագը», ուր բանաստեղծի զգայնությամբ ու նկարագեղ ոճով կպատկերացվի մեր հայրենիքի փոխանդակալից ներկան և մեր ստեղծագործ ժողովուրդի հոյակապ նվաճումները։

Կ. Սիտալի գրական համբավը տարածված է նաև արտասահմանի և Սովետական Հայաստանի մեջ։ Պետհրատը 30-ական թվականներուն հրատարակեց անոր բանաստեղծությունները։ Դեռ անցյալ տարի, Հայաստանի Գրողների Միությունը Կ. Սիտալին նվիրված երեկո մը սարքեց։ Ներկայիս ալ որոշած է Երևանի մեջ հրատարակել անոր գրական երկերու հատորները։

Հոբելյանական Հանձնախումբը այս առթիվ հաճույքով կհայտնե, թե նոր լույս տեսավ նաև հոբելյարի վերջին գործը «Մամ ու Զին» դյուցազնավեպը։ Քրտակոն կյանքի առնված այս գրական մեծարժեք գործը կենցաղային պատմվածք մըն է, ուր կներկայացվի մեր դարավոր հարևան Քյուրտ ժողովուրդի սիրային մեկ տրաման, գեղեցիկ ոճով և համամարդկային շունչով գրված։

Հայ ժողովուրդը գիտե գնահատել իր տաղանդավոր արվեստագետները և վստահ ենք, թե հոբելյանական այս առիթով պիտի գիտնա գնահատել նաև Կ. Սիտալի գրական վաստակը։ Անշուշտ, այս գործի մեջ առաջնությունը կպատկանի ամերիկահայ գաղութին։

Այսու հետ. Հանձնախումբս կոչ կընե որ տեղական հանձնախումբեր կազմվին Ամերիկայի հայաշատ կեդրոններու մեջ։ Կհանձնարարվի նաև տեղական հանձնախումբերու անձնակազմը անմիջապես հաղորդել Նյու Յորքի Կեդրոնական Հանձնախումբին ցուցմունքներու համար։

Վստահ ենք, թե ամերիկահայությունը սրտագին և արժանավայել կերպով կտոնե բանաստեղծի հոբելյանը։

ԴԻՎԱՆ Կ. ՍԻՏԱԼԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ